# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳԿ-14

*ք. Երևան*

*17 օգոստոս 2022 թ.*

ՀՀ գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ֆարմանյանի, որը գործում է ՀՀ գիտության կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վիտալի Պետրոսյան » ԱՁ-ն, ի դեմս Վիտալի Պետրոսյանի, որ գործում է իր անունից (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[15]

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[16]

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ________ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 349000 (Երեք հարյուր քառասունինը հազար ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

---

[15] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[16] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[19]

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[20]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է[24]:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

---

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՎՀՀ 02704199

Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22 ՀՀ
ՀՀ ՖՆ կենտրոնական
գանձապետարան.
Հ/Հ 900011033124
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

----------------------------
Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

ԱՁ Վիտալի Պետրոսյան

ՀՎՀՀ 25398902
Իր. հասցե՝ ք. Երևան, ԱՎԱՆ
ԱՌԻՆՋ 1 ՄԿՐՇ. 2/4 49
Գործ. հասցե՝ ք. Երևան,
Բագրևանդ 2/12
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570074715090100
Էլ. Հասցե petrosyanvitali@mail.ru
Հեռ. +(374)-94-45-30-31
Անհատ Ձեռնարկատեր

----------------------------
Վ. Պետրոսյան
(ստորագրություն)

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
, ԳԿ -14 17 օգոստոս 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | 1 միավոր ծառայության մատուցման գինը | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50111130-1 | Շարժիչի բարձիկի հ/տ | դրամ | 5000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Թափանիվի հ/տ | դրամ | 12 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Թափանիվի պսակի հ/տ | դրամ | 14400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Շարժիչի յուղի և յուղի զտիչի փոխում | դրամ | 3000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Յուղի ռադիատորի հ/տ | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի հ/տ | դրամ | 1000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխում | դրամ | 3000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Օդի զտիչի փոխում | դրամ | 2000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Օդի ծախսաչափիչի /ДМРВ/ հ/տ | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ինժեկտորի բոցամուղի հ/տ | դրամ | 7200 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ինժեկտորի լվացում, կարգավորում | դրամ | 14400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բենզամղիչի հ/տ | դրամ | 10000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Էլ.բենզամղիչի հ/տ | դրամ | 6000 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառելանյութի խողովակի հ/տ | դրամ | 2400 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկավարման բլոկի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառելիքի բաքի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառելիքի բաքի մաքրում | դրամ | 10 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ջրի ջերմաստիճանի տվիչի հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ջրի փողրակի հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Յուղի ճնշման տվիչի հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Յուղի վթարային տվիչի հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հովհարի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հովհարի փոկի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ռադիատորի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ընդարձակող բաքի հ/տ | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Հովհարի շարժիչի /սառնարանի/ հ/տ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Տաքացուցիչի ռադիատորի հ/տ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Թերմոստատի հ/տ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ջրի պոմպի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Միջադիրի փոխում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Խլարարի 1 կտորի հ/տ | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հովացման հեղուկի փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հ/տ | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կցորդման սկավառակների և սեղմող առանցքակալի հ/տ | դրամ | 24 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Էլաստիկ մուֆտի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կցորդման ոտնակի հ/տ, կարգավորում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կցորդման փողրակի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կցորդման եղանիկի /вилка/ հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի հ/տ | դրամ | 20 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի բարձիկի փոխում | դրամ | **5 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Փոխանցման տուփի յուղի փոխում | դրամ | **3 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Կցորդման կարգավորում** | դրամ | **3 600.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի հ/տ** | դրամ | **600.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բաշխիչ տուփի հ/տ | դրամ | **20 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխում | դրամ | **3 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի հ/տ | դրամ | **5 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի խաչուկի հ/տ | դրամ | **5 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հ/տ /подвесной кардан/ | դրամ | **4 000.0** | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի հ/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի ռեդուկտորի հ/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կամրջակի խցուկի փոխում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի կիսասռնու /полуосей/ հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի կիսասռնու/полуосей/ առանցքակալի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կամրջակի յուղի փոխում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի / шаровая | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | опора/ h/տ | | | | | |
| 1 | 50111130-1 | Կամրջակի դիֆերենցիալի h/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կամրջակի դիֆերենցիալ սալնիկի h/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի h/տ | դրամ | 12 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի ռեդուկտորի h/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի կիսասռնու/полуосей/ h/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի կիսասռնու/полуосей/ առանցքակալի h/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի կիսասռնու/полуосей/ առանցքակալի սալնիկների փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի h/տ | դրամ | 30 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի անվակունդի /ступица/ h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Անվակունդի /ступица/ առանցքակալի h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի անվակունդի h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գնդե հոդակապի h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հոդակապի փոշեթիկնոցի փոխում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հոդակապի h/տ /граната передних колес/ | դրամ | 18 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Մեղմիչի h/տ | դրամ | 10 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի զսպանակի h/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Լծակի /рагатка/ h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Լծակի/рагатка/ վռանների փոխում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հարվածիչի (բարծիկի h/տ) | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կայունարարի h/տ | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի զսպանակների h/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի ձգաձողի/штанга/ h/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի ձգաձողի վռանի h/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Զսպանի /рессор/ h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկասյունակի /рулевая колонка/ h/տ | դրամ | 20 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկասյունակի առանցքակալի կամ վռանների փոխում | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկային ձգաձողի /тяга/ h/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկի h/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի մղիչի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխում | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Հիդրոուժեղարարի յուղի տարայի հ/տ** | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Հիդրոուժեղարարի փոկանիվի հ/տ** | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վակումային ուժեղարարի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գլխ. գլանի հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Աշխատանքային գլանի հ/տ | դրամ | 8 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Սուպպորտի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակման մեխանիզմի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակի ճոպանի փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ձեռքի արգելակի կարգավորում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Արգելակային փողրակի փոխում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Արգելակային կոճղակների փոխում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Արգելակային համակարգից օդի հեռացում, | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Արգելակային սկավառակի /թմբուկի/ հ/տ** | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի արգելակային սկավառակի /թմբուկի/ հղկում | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Արգելակային հեղուկի փոխում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գեներատորի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գեներատորի նորոգում | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի նորոգում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Մեկնարկիչի ռելեի փոխում | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ազդանշանի հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Առջևի լապտերի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Լուսարձակների կարգավորում ստենդով | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Հետևի լապտերի հ/տ | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ղեկվարման վահանակի ցուցիչների պանելի հ/տ | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Ղեկվարման վահանակի չափիչ սարքերի հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Թարթիչի լծակի բռնակի հ/տ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բռնկման փական հ/տ | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կոճի հ/տ | դրամ | 2 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ապահովիչների բլոկի հ/տ | դրամ | 4 800.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի լարի հ/տ | դրամ | 500.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Վառոցքի մոմի ծայրակալի հ/տ | դրամ | 1 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Էլեկտրական մալուխի նորոգում | դրամ | 2 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ապակեամբարձիչների հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ապակելվացիչի շարժիչի հ/տ | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Դռան փականի լոքերի հ/տ | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Կողային հայելիների հ/տ | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Նստարանի հանում հ/տ, նորգում | դրամ | 14 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բեռնախցիկի ճոպանի հ/տ | դրամ | 4 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բռնակի հ/տ | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Դռների քանդում հավաքում | դրամ | 3 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Դռների ռետինների հ/տ | դրամ | 1 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Գազաբալոնային համակարգի աշխատանքի կարգավորում սարքի /համակարգչի/ միջոցով** | դրամ | 5 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Գազի բալոնի հ/տ | դրամ | 14 400.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Գազբալոնի փականի հ/տ** | դրամ | 7 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Գազաբալոնային համակարգի ռեդուկտորի հ/տ, նորոգում** | դրամ | 9 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Գազի արտահոսքի հայտնաբերում, վերացում** | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | **Գազասարքավորման համակարգի խողովակի հ/տ** | դրամ | 1 800.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Անվաբացվածքի կարգավորում | դրամ | 6 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ավտոմեքենայի յուղում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Ավտոմեքենայի հանգույցների և դետալների ձգում | դրամ | 3 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Դռան փականի կարգավորում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Բեռնախցիկի ռետինի փոխարինում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Պաշտպանիչի հ/տ /защитник крылья/ | դրամ | 1 000.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50111130-1 | Անվադողի հանում և տեղադրում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Անվադողի քանդում/հավաքում | դրամ | 600.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |
| 1 | 50111130-1 | Անվադողերի հավասարակշռում | դրամ | 1 200.0 | ըստ պահանջի | Օրբելի 22 | 15.12.2022թ. |

**ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՎՀՀ 02704199

Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22 ՀՀ

ՀՀ ՖՆ կենտրոնական

գանձապետարան.

Հ/Հ 900011033124

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

------------------------- Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

ԱՁ Վիտալի Պետրոսյան

ՀՎՀՀ 25398902

Իր. հասցե՝ ք. Երևան, ԱՎԱՆ

ԱՌԻՆՋ 1 ՄԿՐՇ. 2/4 49

Գործ. հասցե՝ ք. Երևան,

Բագրևանդ 2/12

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 1570074715090100

Էլ. Հասցե petrosyanvitali@mail.ru

Հեռ. +(374)-94-45-30-31

Անհատ Ձեռնարկատեր

-------------------------

Վ. Պետրոսյան

(ստորագրություն)

Հավելված N 2
, ԳԿ -14 17 օգոստոս 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130-1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | | | | | | | 180000 | 180000 | 349000 | 349000 | 349000 | 349000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՎՀՀ 02704199

Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22 ՀՀ

ՀՀ ՖՆ կենտրոնական

գանձապետարան.

Հ/Հ 900011033124

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

------------------------Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՁ Վիտալի Պետրոսյան

ՀՎՀՀ 25398902

Իր. հասցե՝ ք. Երևան, ԱՎԱՆ

ԱՌԻՆՋ 1 ՄԿՐՇ. 2/4 49

Գործ. հասցե՝ ք. Երևան,

Բագրևանդ 2/12

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 1570074715090100

Էլ. Հասցե petrosyanvitali@mail.ru

Հեռ. +(374)-94-45-30-31

Անհատ Ձեռնարկատեր

------------------------

Վ. Պետրոսյան

(ստորագրություն)

*Հավելված 3*
*ԳԿ -14 17 օգոստոսի 2022թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*, է, է 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____է ,____________________է 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ , է , է 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*, ԳԿ -14 17 օգոստոսի 2022թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն